



ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՐԻՄՅԱՆԻ ԵՐԿԵՐՈՒՄ

19-րդ դարի հայ եկեղեցական խոշորագույն դեմքերից մեկն է Խրիմյան Հայրիկը:

Նա ապրել և գործել է քաղաքական և հասարակական խոշոր իրադարձություններով հարուստ մի ժամանակաշրջանում, որ ընդգրկում է 1820—1907 թ. թ.: Այդ ժամանակաշրջանում նա հանդես է գալիս որպես նշանավոր եկեղեցական, հայրենասեր գործիչ:

Խրիմյանի հայրենասիրությունը դալ, էր Վասպուրականի գեղեցիկ լեռնաշխարհից: Արժքունները հայրենիքը հարուստ էր պատմական կոթողներով, պալատներով ու վանքերով, քաղաքներով ու ջրանցքներով: Այդ երկրի ժողովուրդը սրբությամբ պահպանել էր հայրենի ավանդությունները, սովորությունները, սոնախառնությունները: Հարուստ պատմական անցյալը, այդ ավանդություններն իրենց գեղեցկությամբ ու սովորությունները անջնջելի աղբյուրություն են գործել Խրիմյանի կրոնական աշխարհայացքի կազմավորման վրա: Հայրենի այդ միջավայրում ծնունդ առավ և աճեց նրա մեջ հայրենասիրական զգացումը: Խրիմյանը սիրում է իր հայրենիքը, հայ եկեղեցին, կրոնը, հայրենի ավանդությունները, իսկ խրկրադործ դասակարգը: Նրա սերը դեպի երկրապետը, մշակ դասակարգը ջերմ է, քանի որ հայրենիքը իր գոյությունից առաջ ջլապինդ ամբողջուն ձեռքերի վրա է հիմնված: Այդպես է մտածում Խրիմյանը և նա սիրում է և փայտաշինում է երկրապետի մասը, նրա հերկած հողերը, հիանում նրա աշխատանքով, լսում նրա պատմած հեքիաթներն ու ավանդությունները, ապրում դրանցով, օրհնում ժողովրդի վաստակը,

նրա քրոնքը սուրբ համարում և կոչ անում նրան, որ նա իր ստեղծագործ ձեռքերով ավելի ամուր, էլ ավելի աշխուժով ու բերկրանքով լծվի մայր հողի մշակմանը, ճոխացնի և երկիրը լցնի առատությամբ:

Գյուղացու օջախը, թոնիրը և երգը Խրիմյանի համար հավերժական սրբություններ են, ուստի և նա հորդորում է խնամքով և երկյուղածությամբ պահպանել այդ սրբությունները: Գյուղացու դուխանը, ախորը, խոփը, նրա օջախը Խրիմյանի համար սրբություն սրբոց են, արևի լույս, կյանքի աղբյուր, ստեղծագործ ուժ: Այդ ուժը, — խրատում է Խրիմյանը, — պետք է պահել աչքի լույսի տակ:

Հայրենի քարը, հողը, աղբյուրը կամ դետը, ծառն ու ծաղիկը սիրելի են Խրիմյանին: Նա գիտե աղբյուրը սիրելի և սիրելի դարձնել: Ահա նրա հայրենասիրական անհանդգնելի բոցի հավերժական ջերմությունը և լույսը:

Նա կարողանում է հեռավոր ու մոտավոր անցյալը շաղկապել առօրյային և այս երեքի մեջ դնել իր ոգին, իր հայրենասիրությունը:

Սերը առ հայրենիքը, եկեղեցին, հայրենի կոթողները, ավանդությունները, երկրապետ ժողովուրդը նա արտահայտել է իր գրական ստեղծագործությունների մեջ, որոնք լույս են տեսել զանազան Ժամանակներում:

Խրիմյան Հայրիկի տպագրական առաջին գործը «Հրավիրակ Արարատյան» երկն է, որը լույս է տեսել 1850-ական թ. թ.:

Հանձին Խրիմյանի, նրա «Հրավիրակ Արարատյան»-ի մեջ մենք տեսնում ենք

կոմիտե, փորձված, աննահանջ հայրենասերի:

Այս երկրի առաջաբանում Սերիմյանը գրում է.

«Զօրութիւն սիրոյ հայրենեաց այնչափ բռնացաւ յիմ վերայ մինչև հան և յաւրելոսականաց յինչն ի պանդխտելոյս զողոսիմ եւ սիրտ եւ տարաւ այսպիսեօք ի հայրենին և անդ ի ցանկալի վայրս նորին ձեմեցողեալ զիս շատ լացոյց և ի տեղիսն յորում արտասուեցին իմ աչք և քոյղ արտասուելոց են՝ ո՛վ ընթերցող, եթե և դու իբրեւ զիս ըմբռնեցիս նոյն կապանօք սիրոյ հայրենեացն եւ քո սիրտ եւ հոգին ի քէն ելցեն եւ ընդ իմոյն գնացեն անդ: Բայց ես աղաչեցի զսէրն այն զիս միայնակ չվարել, այլ եւ ընդ իս զհամօրէն մանկունս Արարատեան աշխարհին, որ զատեալք ի մայրենի ծոցոյն ցան եւ ցիր կան ընդ քառանկիւն կողմանս տեղեւոց եւ կարօտ են իբրեւ զիս եւ նոքին դիմաց հայրենախոյն»:

Պարզ է խոսում Հայոց Հայրիկը: Հայրենիքի սերը, առում է նա, այնպես ինձ հաղթահարեց, որ խլեց ինձնից իմ սիրտն ու հոգին և տարավ հայրենիք և այնտեղ ինձ ման ածելով լացացրեց. և տրտել ես եմ արտասուել, այնտեղ կարտասուես նաեւ, դու, ո՛վ իմ ընթերցող, հայրենիքի սիրտ նույն կապերով կկապկապես նաեւ դու և քո սիրտն ու հոգին նույնպես քեզանից հրաժարելով իմինի հետ կերթան հայրենիք:

Բայց ես չուզեցի այս սերը միայնակ վայելել, շարունակում է նա, այլ ցանկացա, որ այս սերը վայելեն Արարատյան աշխարհի բոլոր մանուկները, նրանք, որոնք մայրենի ծոցից անջատված ցան ու ցիր են եղել աշխարհի չորս կողմերում և ինձ պես կարօտ ու ծարավի են հայրենիքին:

Հայրիկի քարոզը պարզ է և բնորոշ: Նա շատ լավ գիտե, որ բոլորն էլ պիտի

բոցավառվեն հայրենիքի սիրով, ինչպես լալը, բայց նրան մտատանջութիւն են պատճառում հայրենիքից դուրս, օտար շորիզոնների տակ գտնվող մանուկները, պէս նրանք են, որ ամենից շատ կարիք ունեն հայրենիքի խոսքին: Նրանց է, որ իր երկով Սերիմյանը պիտի կապի հայրենիքի հետ և նրանց ազատագրի օտար միջավայրից և հայրենիքի սիրով պիտի դրավի և բերի Հայաստան:

Այսպիսով Սերիմյանը ինդեր է դնում իր առջ օտար երկրներում, աշխարհի չորս կողմը գտնվող հայ մանուկներին բերել հայրենիք, ինչպես ո՞ր իրենից «հան եւ յախշտակեաց յինչն ի պանդխտելոյս զողոսիմ իմ եւ սիրտ եւ տարաւ ի հայրենին»: Նույն ձևով ցանկանում է, որ հայրենիքի սերը պանդխտության մեջ գտնվողներին նույնպես բերի հայրենիք: Հայրենիքը ուժեղ և կանգուն պահելու առաջին նախապայմանն էր այդ: Բայց ի՞նչպես իրականացնել այդ: Դրա համար անհրաժեշտ է պանդխտի սրտում և հոգում հայրենիքի սերը բոցավառել, անհրաժեշտ է գրել և նրան ցույց տալ հայրենի երկրի գեղեցկությունները, պապերի ու հայրերի կատարած գործերը:

Եվ նա ձեռնարկում է «Հրափիրակ Արարատյան»-ի ստեղծագործութայնը: Որ հիմալի Հայրիկի նպատակն է հայ մանուկներին կապել հայրենիքի հետ և նրանց համախմբել մայր հայրենիքի շուրջը, այդ երևում է նույն առաջաբանում գրված հետևյալ տողերից.

«Որպէս ցուցաւ վերագոյն, թէ հայրենեացն սէր վարեաց զմեզ ընդ մամկտայն յիմքն (ընդդէմը մերն է), սակայն պիտոյ եղեւ մեզ անդանօր այսպիսի քնար իմն առ ի հարկանել զայն ընդ ճեմերն մեր ի հայրենեացն վայրս, որոյ ձայն քաղցր եւ անոյշ լսէր անդ հանդուցեալ ականջաց քերթողահարցն մերոց Սահակայ, Մեսրոպայ և Մովսիսայ»:

1) Ամբողջական երկեր Սերիմյան Հայրիկի՝ Նյու-Յորք, 1929 թ. էջ 7. Յառաջաբան

1) Ամբողջական երկեր Սերիմյան Հայրիկի՝ Նյու-Յորք, 1929 թ. էջ 8:

Հայրերը ցանկանում է հայ մանուկներին հավաքել այնպիսի քնարով ու երգով, որպիսին երգեցին Սահակը, Մեսրոպը, Խորենացին:

Այնուհետև «բայց մի՞թե անարուեստիս բանից թերութիւն իբրեւ քերթողի դատեցի»¹⁾:

Երկմտում է Հայրերը և բաց է անում իր հոգին: Հելլադի, դուցե իրեն չի հաջողվել Սահակի, Մեսրոպի և Խորենացու քնարը հնչեցնել, բայց մի՞թե այդ կարող է դատապարտելի ըլինել: Ոչ ամենևին:

Եվ մի քանի տող ներքև նա տալիս է դրա բացատրութիւնը:

«Այլ թեպէտ յայտոցիկ կատարելութեանց թերացեալ դոսնիմք յերկասիրութեանս այսմիկ, սակայն ոչ ի լի հայրենասիրութենէ. զար գրեթէ իբր զկենդանի պատկեր տպաւորեալ եմք ի սիրի ընդ որ հայել ուրաւ և յանձին գգալ իմչ, յերաւի չէ նա ի կարգի հայրենասիրացն»²⁾:

Թերեւս դրական կատարելութեան տեսակետից իմ այս երկասիրութիւնը թերութիւններ ունենա, հայտարարում է Խրիմյանը, սակայն հայրենասիրութեամբ այն անթերի է և լի է հայրենի սիրով, որը տպաւորել ենք մեզ երկասիրութեան մեջ որպէս կենդանի պատկեր:

Ի՞նչ խոսք այն մասին, որ Խրիմյանը զգում է իր հոգու մեջ գերակշռող, ամեն զգացումից բարձր ու վեր դասվող հայրենասիրութեան գորութիւնը, քանի որ ինքնն ևս զգում է, որ ամեն կողմով և ամեն կերպ կլանված է այդ սրբազան զգացմունքով, որ ինքը միայն դրանով է շնչում և ապրում:

Ինչպես հետո կտեսնենք, այս և նման արտահայտութիւնները Խրիմյանի հայրենասիրութեան ամենաթույլ մրմունջներն են միայն, առաջին թոթովանքները: Նրա

երկերում հայրենասիրութիւնը հանդես է բերված աստիճանական զարգացումով:

Խրիմյանը. հայրենասիրութիւնը իւրախուսում է հայ ժողովրդի պատմական անցյալով և այն կոչում նրա ներկայով:

Պանդուկտ մանուկների սրտում հայրենիքի սերն ամրաստեցւում և զարգացնում նպատակով անհրաժեշտ է դառնում, որ նրանք ճանաչեն իրենց հայրենիքը, ճանաչեն լավ և մատիկից, գիտենան նրա անցյալ պատմութիւնը և այն փոթորիկները, որ ապրել է նա, ճաշակեն նրա անցյալի փառքը, տեսնեն նրա ստեղծագործութիւնները, հիանան նրա կուլտուրայով, նրա ստեղծագործ ոգու մեծութեամբ ու հզորութեամբ, շուտիկն նրա քրտնալսատակ աշխատանքի աղբյուրը, զգան աշխատանքի ամենակարող, ամենաստեղծ վեհութիւնը: «Հրավիրակ Արարատյան»-ի մեջ կենդանի խոսքով և օրինակներով նա ներշնչում է այդ զգացումներն ընթերցողին:

«Հրավիրակ Արարատյան»-ի առաջին նվազում Հայոց Հայրերը պանդուկտյան մեջ դառնող հայերին նախ ցույց է տալիս աշխարհի ստեղծագործութիւնը, այսինքն Աստուծո առաջին քայլը, նրանց տանում է դրախտ և ապա նրանց տեղափոխում Արարատյան երկիրը, նկարագրում և ի տես հանում Արարատյան դաշտն իր բոլոր գեղեցկութիւններով ու բուսական կենդանական լուսնալուսնութեամբ, պտտեցնում Երասխի ափերը, պատմում Երասխի և Արարատյան դաշտի նախկին ծաղկյալ վիճակը, և ցուցադրում ներկան, ապա նրանց տանում Մասիս և իր առաջին երգը վերջացնում Մ. Հակոբ Մծբնա. Հայրապետի պատմութեամբ, Մասյաց ստորոտում Մ. Հակոբա վանքի կառուցմամբ և Ակոուի դուռը հրաբխային կործանմամբ:

«Առ քեզ արեւելեան առ պերճ աշխարհը. Հայաստան

Հրավիրեմ լոջըդ զմանկտիս որ արդ ի քեն կան հեռացեալ:

Ոյց, գիտեմ, յոյժ կարօտիս որպէս ըզմայր որդեկորոյս

1) Ամբողջական երկեր Խրիմյան Հայրերի, Նյու-Յորք 1912 թ. էջ 101:

2) Նույն, էջ 101:

Նազեկի դիմաց նոցին մնացեալ կարօտ
 քեզ ընդերկար:
 Առաւել և քան ըզմայրդ քեզ կարօտին
 և քո մանկունք,
 Ոյք ահա թէ ոչ ոտիւք գէթ անձկայրեաց
 սրտին սիրով
 -տպմտտ մոտի նմադմտոյ մի Դգրցոյ Դոմ
 տենչ և վայելուչ
 Իբր ի վարձու դիւս գրաւեցին լինել նոցա
 ինձ առաջնորդ»¹⁾:

Այսպիսի տողերով է սկսվում «Հրապի-
 րակ Արարատյան»-ը:

Այս տողերից տեսնում ենք, որ հայ-
 րենաստ ությունը Հայոց Հայրենիք համար
 անվի յի ճշմարտություն է, այնպիսի
 պարտականություն, որ քննվել և վերա-
 նայվել չի կարող: Եվ բացի այդ Մայր
 Հայաստանը կարոտ է իր որդիներին և
 նրա կարոտը հասարակ կարոտ չէ, այլ
 որդեկորույս մոր կարոտ: Փոխադարձ սի-
 րո, կարոտի այս կապը բնական է և ան-
 քակտելի:

Եվ ահա Հայոց Հայրենիք դարձել է
 նրանց առաջնորդը:

Եվ որովհետև Հայրենիք ինքն էլ հայ-
 րենիքից հեռու է և չի կարող հայրենիքը
 տեսնել, ուստի նա դիմում է իր մոլոր և
 սրտի թեւերին, դիմում է Նոյի դարի
 հողմերին, որ իրեն և իր վայելչաթճ
 հայկյան սիրասուն մանուկներին թոցնեն,
 տանեն Հայաստան:

«Հնչեցէ ապա հողմունք որպէս Նոյ-
 ւան անդ ի դարուն,
 Ձիւ ի թևս առեալ տարայք ի յԱյրարատ
 իմ հայրենին:
 Եւ ընդ իս թեւօք սրտից թռուցեալ եկայք
 Հայկեան մանկունք,
 Եկայք դուք տան թորգոմայ, ո՛վ տարա-
 դոյն դարմք և դաւակք,
 Որ ընդ ոլորտս աշխարհի կայք տարա-
 ծեալ դժբախտարար»²⁾:

Այս տողերից ակնհայտ կերպով հետե-
 վում է այն միտքը, թե յուրաքանչյուր
 մարդ, որքան էլ հեռու լինի իր հայ-
 րենիքից, այն կարող է տեսնել, շուտիւն,
 զգալ, այսինքն հողեպես ապրել ու շնչել
 հայրենիքով, իր հոգում ունենալ իր հայ-
 րենիքն ու ժողովուրդը, որպես իր ամ-
 բողջականության անբաժանելի մասը:

Դրախտը, որ ըստ ավանդության
 դնվել է Եփրատ և Տիգրիս գետերի հո-
 վիտներում, հանդես է գալիս Որիմյանի
 երկերում: Նկարագրելով դրախտը և նրա
 հետ կապված մարդկային կյանքի առաջին
 քայլերը, Որիմյանը անցնում է Արարատ-
 տին:

«Պատրաստեալ ելէք յուղի արդ եւա-
 նեմք ի յԱյրարատ
 Եւ ի վիճակ սեպհական Արշակունեան վեհ
 արքայից»:

Լեռներով չրջապատված Արարատյան
 դաշտը նմանեցնելով պարսպապատ աշտու-
 Հայրենիք թվում է Արարատյան դաշտի
 թափըները:

Որիմյանն ընդհանրապես տնտեսու-
 թյունն ընդունելով ժողովրդի բարեկեցու-
 թյան հիմք միաժամանակ այն համարում
 է հայրենիքի պահպանման զորավոր միջոց
 և այդ է պատճառը, որ նա իր բոլոր
 դրվածքներում լույսայն չի անցնում հո-
 ղագործության, արհեստների, ընդհանրա-
 պես տնտեսությանը և աշխատանքին վե-
 րաբերող խնդիրներին կողքից: Այս հիմնա-
 կան ելակետը աչքաթող չանելով նա հա-
 ճախ շեշտում է նաև այն բոլորը, ինչ որ
 առօրյա կյանքում շատերը չնչին կամ ան-
 արժեք են համարում: Ոչ, Որիմյանի հա-
 մար տնտեսական կյանքում չնչինը կամ
 աննշանը գոյություն չունի: Նրա տեսա-
 կետով հասարակն ու աննշանը նույնքան
 անհրաժեշտ են, որքան սերմը, լճիկը,
 դուլթանը և այլն: Եվ նկարագրելով Արա-
 րատյան դաշտի բնական գեղեցկությունը,
 Մասիսի վեհադիպ տեսքը, դաշտի ջրա-
 ուստությունը, Երասխի հավերժական ըն-
 թացքը և այլն, նա կանգ է առնում Արա-

1) Ամբողջական երկեր Որիմյան Հայրենիք,
 Նյու-Յորք, 1913 էջ 8:

2) Նույն էջ 27:

բատում աճող բույսերի վրա, նա նշում է բրինձը, բամբակենին, ցորենը, դարին, բազմատեսակ բանջարենիքը, խաղողի տուն-կը, մրգերը բազմազան տեսակներով, ցուցադրում ոչխարների և այծերի հոտերը, ձիերի երամակները, ընտանի ու վայրենի թռչունների երամները, Երասխում խայտացող ձկների վտանները և այլն: Սակայն չմոռանալով շնչտեղ հայ գեղջուկի առատ կյանքը և գլխարձությունները վըռ-տացած բացականչում է.

«Յարդ անդեայս բեղմնաբեր մինչ ար-
կանէր մշակն դեւրմն,
Յուսայից էր ընդ միոյն զհարկւրաւորն
Ժողովել.
Ախոսս, այդպէս այժմիկ, խոսարնացեալ
կան ընաւին,
Հասկաթուռ ընդ ցորենոյն փուշք մոլա-
խոտ են արդ բուսեալ.
Յայս երկիր պարարտահող ոչ եղնամոլք
ձըգին դարօր.
Ոչ ի հերկ սերմնահան դրուռն ընու յու-
սով ի ցան,
Ոչ հընձողն ըղզերանդին առեալ ուրախ
դայ յանդառտան.
Եւ ոչ սայլքն որայիւք բարձեալ դընան
ճոռնչելով.
Կամն օրանք ի կալատեղս դէզ հարկանի
թըլրատեսակ.
Կամ ատօք ցորենոյն թեղ շեղձակուտի լեռ-
նահանդէտ.
Եւ լըցեալ ի շտեմարան ցընծայ մըշակն ի
ձմերայնի»:

Դրվատելով Արարատյան դաշտի բերք առատությունը, նկարագրելով նրա անցյալի առատությունը Խրիմյանը կանոյ է առնում իր ներկայի վրա, ներկան համեմատում է անցյալի հետ և ցավազին ամիսոսն է դուրս թռչում նրա սրտի խորքե-րից: Խրիմյանը դժգոհ է, անցյալը հաբուստ էր, սուստ, ճոխ և փարթամ, իսկ իր ներկան աղքատ է, չբավոր և դա հոգեպես դնցում է նրան:

Մինչ անցյալում մշակը սերմը հողին հանձնելով մեկին հարյուր էր ստանում,

իր օրերում, սակայն, այդ հողերը անմշակ են և խոպան, հատկերով լի արտերի փոխարեն փուշ ու տատասկ է տեսնում հայրենի հողերում, այս պարարտ հողե-րում եղներ ու արոր չի տեսնում, սերմ-նացանը չկա, որ հողին սերմ հանձնի, չի երևում ուրախ հնձողը, որը դերանդին ուսած դեպի արտը շտապի, չկան բեռ-նավորված սայլեր, որ նրանց ճռնիչը լսի, կալատեղերում բլրանման ցորենի դեղեր չկան և ոչ էլ ցորենի շեղջեր, որպեսզի հողի մշակը, աշխատավորը այս իր շտեմարանը փոխադրելով ցնծա և ուրախանա և դաժան ձմրանը դիմանալ կարողանա:

Բայց լինե՞ա է այսպես, ի՞նչն է բացակայում: Անշուշտ աշխատանքը և աշխատավորը: Եվ Հայրիկը բացատրում է.

«Եւ զի հունձք և հողադործք յերկրէս
յուռթի պակասեցան.

Որ չունէր թիղ մի տեղի բնառ երբեմն ան-
մշակեալ,

Այսօր համայն իւր դեւտին կայ կորդացեալ
եւ անարօր

Ձի կորոյս հայոց աշխարհ դմեծ Արտա-
շեսն մըշակող»¹⁾:

Խրիմյանը առանձին բախակիանությամբ նշում է դուռղացու աշխատանքը, դյուռա-տնտեսական արտադրանքը, ոչխարի կի-թը, ոչխարի խուղեղը, բորդից դործվածք-ներ պատրաստելը դյուռում և այլն: Ահա մի նմուշ.

«Ոչ ևս հովիւն կենսաւէտ յարդ վտա-
կունս յըստակաջուր
Կամ խաչին տէրն ի կտուրս դայ ի խուղել
ըզգեղմնաբարձս,

Եւ կանանց ոստնադործ նիւթ ընծայել
ասրեղինաց,

Ոյց մատանց ճարտարութիւնք ցարդ տե-
սանին ի Հայաստան

Նարօտ, նարօտ հիւսուածք ի դորդս. ի
սէս սէս գործըս մատանց»²⁾:

Գյուղատնտեսության այս ճյուղն էլ նա չի տեսնում նկարագրվող Արարատում:

¹⁾ Նույն, էջ 33:

²⁾ Նույն էջ 36:

Եվ անակնկալ կերպով նա հիշում է
պատմական հեռավոր անցյալը, տեսնում
էր ամսխիթար ներկան, երազում մի վի-
ճակ, որ չկա թշվառություն, ոչ պատե-
րազմ ու խաղմարար աշխարհավերս:

«Վա՛շ, քանի՞ քաղցր էր նոցին կենցաղ
երկրիս Այրարատայ,
Յորժամ ոչ էր բռնաւոր և հարկահան ա-
նադորոյն,
Ոչ կըռսիումըն անաւազին և աղաղակ զըր-
կեցելոյն,
Ոչ իշխան, ոչ փշխեցեալ կամ թագաւոր և
ժողովուրդ,
Ոչ զօր, ոչ պատերազմ եւ խաղմարար աշ-
խարհաւեր»:

Ահա հասարակական մի դոյաւիճակ,
ուր ոչ բռնաւորն է իշխում և ոչ էլ դա-
ժան հարկահաւաքը, ոչ հանիչտակություն
կա և ոչ զրկւածի աղաղակը, ոչ իշխան
կա, ոչ թագաւոր, ոչ զորք և ոչ պատե-
րազմներ:

Սա Հայրիկի իդեալն էր մարդու և
աշխարհի վերաբերյալ և այս տողերը ըն-
րոշում են նրան, որպէս սոցիալական ան-
արդարությանը հակառակորդ մարդու:
Սակայն շարունակենք:

«Ոչ է սուր ձուլէր երկաթ, այլ է
մանգաղ և դերանդի
Լոկ է պէտս երկրագործին, ոչ մարդոյն
մարդախոշոյ:
Զէր սահման լարաբաժնին ոչ աղետոսնք
ցանկապատեալ,
Ոչ պաճարաց կամ խաչանց վերայ դրոշմէր
նշան տաղին,
Զի բարբառ դժոխաւուր չէր լսեալ աստ
իմ եւ քոյ»:

Երկաթից սրեր չափտի ձուլել մարդիկ
ոչնչացնելու համար, այլ մանգաղ և դե-
րանդի սրտի շինել երկրագործությունը
զարգացնելու համար: Այսպէս է դնում
խնդիրը Թրիմյանը:

Ռ. Վ.

(ՇԱՐՈՒՆԱՅԵԼԻ)

